ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՆԱՆԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ МАВИРА
МУНИЦИПАЛИТЕТ ВАНАНДА

Թիվ 106

«14» 05 2019 թ.

Արմավիրի մարզ գ.Վանանդ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
պարոն Հ.Մաթևոսյան

Հարգարժան պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արմավիրի մարզի Վանանդ ավագանու 2019 թվականի մայիսի 13-ի թիվ 04 նիստի որոշումները:

Առդիր՝ 8 էջ

Վանանդի համայնքապետ՝ Ջ. Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

13 մայիսի 2019 թ. թիվ 04 նիստի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ <u>ԹԻՎ 13</u>

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 13-ի թիվ 04 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ՝ | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| Ժիրայր | Այվազյան | | | |
| Արթուր | Թովմասյան | | | |
| Քրիստինե | Խլղաթյան | | | |
| Գևորգ | Մուրադյան | | | |

Վանանդի համայնքապետ Ջ. Մանուկյան

2019 թ. մայիսի 13
գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վանանդի համայնքի ավագանու
2019 թ. մայիսի 13-ի թիվ 13 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու

թիվ 04 նիստի.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 13-ի թիվ 04 նիստի օրակարգի հաստատումը:

   / Զեկ. Ջ. Մանուկյան/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի << Ներտնտեսային ոռոգման ցացի վերանորոգում, հիմնանորոգում >> ծրագրի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտը հաստատելու հարցը:

   / Զեկ. Ջ. Մանուկյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13 մայիսի 2019 թ. թիվ 04 նիստի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ <u>ԹԻՎ 14</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 6-ի N 62-Ն որոշումը

Համայնքի ավագանին որոշեց.

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի << Ներտնտեսային ոռոգման ցացի վերանորոգում, հիմնանորոգում >> ծրագրի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտը՝ համաձայն հավելվածի:

4. Համայնքի ղեկավարին/ Ջ. Մանուկյան/՝ ծրագրային հայտը ներկայացնել համապատասխան մարմիններին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ՝ | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| Ժիրայր | Այվազյան | [signature] | | |
| Արթուր | Թովմասյան | [signature] | | |
| Քրիստինե | Խլղաթյան | [signature] | | |
| Գևորգ | Մուրադյան | | | |

Վանանդի համայնքապետ [signature] Ջ. Մանուկյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վանանդի համայնքի ավագանու
2019 թ. մայիսի 13-ի թիվ 14 որոշման

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | *ՀՀ Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցի վերակառուցում, հիմնանորոգում* |
| Մարզ | *Արմավիր* |
| Համայնքը /համայնք-ները | *Վանանդ* |
| Համայնքի /բնակա-վայրի հեռավորու-թյունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | *Մայրաքաղաքից՝ 70կմ*<br>*մարզկենտրոնից՝ 25 կմ* |
| Համայնքի /բնակա-վայրի բնակչությունը | *1073 մարդ* |
| Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի | *Արմավիրի մարզի Վանանդ համայնքը սահմանամերձ և բարձր լեռնային համայնք չի համարվում,*<br>*Համայնքը Թուրքիայի սահմանից գտնվում է 3 կմ հեռավորության վրա:* |
| Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն | *Վանանդ համայնքը ամբողջովին ապահովված է վեցժամյա խմելաջրի ջրամատակարարմամբ: Խմելաջրի ցանցը ամբողջովին նոր է, որը սպասարկում է Վանանդի համայնքապետարանը:*<br>*Էլեկտրամատակարարումը իրականացվում է ընդգրկելով համայնքի ամբողջ տարածքը:*<br>*Ոռոգման համակարգը ընդգրկում է ամբողջ համայնքը, բայց գտնվում է ոչ բարվոք վիճակում:*<br>*Համայնքի փողոցները ամբողջությամբ ապահովված են գիշերային լուսավորությամբ:* |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | *Վանանդ համայնքի ոռոգման ցանցը կառուցվել է 1985թվականից և մինչև օրս հիմնանորոգման կամ միջին նորոգման չի ենթարկվել:*<br>*Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը բլրալանջային է, ներկայացված հրաբխային առաջացումներով, բազալտը մեծաբեկորներով և խճաքարային նյութերով, որոնք հիմնականում ծածկված են 1.0-2.5մ հզորությամբ կավավազա-խճաքարային նյութերով* |

| | |
|---|---|
| | և հողաբուսական շերտով:<br>Գյուղամիջյան ճանապարհները և անասնաճանապարհները հիմնականում ծածկված են լիցքային գրունտներով:<br>Ոռոգման ցանցի շատ տարածքներ զբաղված են հողաքարային թափոնակույտերով:<br>Շրջանը և տարածքը մտնում են կլիմայական տաք գոտու մեջ, որտեղ օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +410C, նվազագույնը -300C:<br>Հողի սառչելու առավելագույն խորությունը կազմում է 70սմ:<br>Ոռոգման ցանցի հիմնանորոգման ընդհանուր երկարությունը կազմում է 2800մ, իսկ ոռոգման ցանցի ստորգետնյա տեղադրման խորությունը նախատեսվում է մինչև 1մ խորության սահմաններում:<br>Ոռոգման համակարգի ոչ բարվոք վիճակի պատճառով համայնքում շատ տնամերձներ և հողամասեր չեն մշակվում:<br>Համայնքին պատկանող ոռոգման ցանցի 5403մ-ից 2603մ-ը 2019թվականին կհիմնանորոգվի, իսկ մնացած 2800մ-ը մնում է վատթար վիճակում:<br>Ոռոգման ցանցի հիմնանորոգման խնդիրը ներառված է համայնքի ղեկավարի 5-ամյա զարգացման ծրագրում: |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրա-կանացման նպատակին** | Համայնքաստեղծ և համայնքապահպան գործոններից են ժամանակակից և զարգացած ենթակառուցվածքները, որտեղ իր ուրույն տեղն ունի ոռոգման ցանցը:<br>Ծրագրի իրականացման արդյունքում կավելանա շահառուների թիվը 111-ից հասնելով 251 և ոռոգման տարածքը կավելանա 17հա-ով:<br>Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կապահովվի հարյուր տոկոս ոռոգման ջրով,որի արդյունքում կմշակվեն համայնքի ամբողջ հողամասերը և տնամերձները:<br>Կապահովվի նաև գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասունների ջրապահովվածությունը:<br>Կբարելավվի համայնքի սանիտարահիգենիկ վիճակը, կանխարգելելով համաճարակների տարածումը:<br>Կփոխվի համայնքի բնակչության ապրելակերպը և կյանքի որակը: |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | Ծրագրով նախատեսվող արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները՝<br>- Կատարել ոռոգման ցանցի հիմնանորոգման ենթակա հատվածի ուսումնասիրություն և կազմել արձանագրություն:<br>- Կատարված ուսումնասիրության տվյալների հիման վրա ճշգրիտ և մասնագիտորեն հիմնավորված տեխնիկական բնութագրի կազմում՝ առաջնորդվելով գործող նորմատիվային պահանջներով և շինարարական նորմերով:<br>- Ծրագրի ցանկալի արդյունք ապահովելու նպատակով նախատեսել աշխատանքների նկատմամբ տեխնիկական, հեղինակային և լաբորատոր փորձարկումների իրականացում:<br>- Կատարել նախագծի փորձաքննություն: |

<table>
<tr>
<td></td>
<td>- Վերը թվարկված աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև ծրագրի ամբողջական փաթեթը մարզպետարան ներկայացնելը մինչև ս/թ մայիսի 15-ը:<br>Նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները՝<br>1. 2800մ երկարությամբ հողային աշխատանքներ:<br>2. 2800մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակի անցկացում՝ ըստ նախագծի:<br>3. 2800մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակի ծածկում:<br>4. 140 ջրօգտագործողների համար հանգույցների նախագծում՝ գոյություն ունեցող ոռոգման ցանցի հետ միացումով և խողովակային ելքի ապահովումով:<br>Ծրագրի իրականացման համար համայնքը պատրաստ է ներդնել մոտ 9.000.000 ՀՀ դրամ, որը բյուջեի ֆոնդային մասում առկա է:<br>Նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռքբերման համար գումարներ բյուջեում նախատեսված են:</td>
</tr>
<tr>
<td>Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում</td>
<td>Հիմնանորոգման ենթակա ոռոգման ցանցը համարվում է Վանանդ համայնքի սեփականություն և նախատեսվող ծախսերը համարվում են կապիտալ և ներդրման արդյունքում կբարձրանա գույքի հաշվեկշռային արժեքը:</td>
</tr>
<tr>
<td>Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա</td>
<td>Ծրագրի իրականացման արդյունքում կավելանա շահառուների թիվը 111-ից հասնելով 251 և ոռոգման տարածքը կավելանա 17հա-ով:<br>Հիմնանորոգման արդյունքում կավելանա գյուղմթերքի և բանջարաբոստանային կուլտուրաների մշակման ծավալը:<br>Կբարելավվի համայնքի սանիտարահիգենիկ վիճակը, կանխարգելելով համաճարակների տարածումը:<br>Կփոխվի համայնքի բնակչության ապրելակերպը և կյանքի որակը:</td>
</tr>
<tr>
<td>Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր</td>
<td>Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն ժամանակավոր աշխատատեղեր:</td>
</tr>
<tr>
<td>Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը</td>
<td>Նախորդ տարվա բյուջեն՝ 22,287,800 դրամ
<table>
<tr><th></th><th>Պլանը</th><th>Փաստացին</th><th>Տոկոսը</th></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝՝</td><td>22.287.800</td><td>22.506.800</td><td>101</td></tr>
<tr><td>-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝</td><td>22.287.800</td><td>22.506.800</td><td>101</td></tr>
<tr><td>- Սեփական եկամուտներ</td><td>13.948.100</td><td>14.167.100</td><td>101</td></tr>
<tr><td>-Ֆոնդային բյուջեի եկամուտներ</td><td>27.960.700</td><td>16.681.300</td><td>60</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,</td><td>22.287.800</td><td>22.011.300</td><td>99</td></tr>
</table>
</td>
</tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| *որից՝* | | | |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 5.672.900 | 5.330.000 | 94 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | | | |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից՝* | | | |
| - ճանապարհաշինություն | | | |
| - ջրամատակարարում | | | |
| - փողոցային լուսավորություն | | | |
| - գյուղատնտեսություն | | | |
| | | | |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

***Ընթացիկ տարվա բյուջեն՝ 35,505,100*** *դրամ*

*Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

| | **Պլանը** |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում*** *այդ թվում"* | 35.505.100 |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 35.505.100 |
| - սեփական եկամուտներ | 27.122.200 |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | - |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 49.877.100 |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 35.794.600 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 14.082.500 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,*** *որից՝* | |
| - 5112 շենք և շինության կառուցում | - |
| - 5113 շենք և շինության կապիտալ վերանորոգում | 12.822.500 |
| - 5121 տրանսպորտային սարքավորումներ | - |
| - 5122 վարչ. սարքավորումներ | 500.000 |
| - 5129 այլ մեքենաներ և սարքավորումներ | 600.000 |
| - 5133 գեոդեզիական քարտեզագրություն | 160.000 |
| - | |

| | |
|---|---|
| **(ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով** | ֆոնդային բյուջե կազմում է 11 208.900 ՀՀ դրամ: Վարչական բյուջեի միջոցներից ֆոնդային բյուջե ուղղվող միջոցները՝ 207.900 ՀՀ դրամ: Ֆոնդային բյուջեի ընդհանուր ծախսերը կլինեն ընդամենը 14.082.500 ՀՀ դրամ,<br>որից տվյալ ծրագրի համար նախատեսված գումարը կազմում է 16900000 ՀՀ դրամ, իսկ ծրագրի ընդհանուր նախահաշվային արժեքը կազմում է 42235600 ՀՀ դրամ, այսինքն՝ պակաս գումարի չափը կազմում է 25335600 ՀՀ դրամ: Ուստի, անհնարին է դառնում ծրագրի ամբողջական իրականացումը համայնքային բյուջեի միջոցներով և ակնկալվում է ՀՀ կառավարության աջակցությունը: |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն** | *42,235.600 դրամ (100%) ըստ նախահաշվի* |
| **Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը** | *16.900.000 դրամ (40%)* |
| **Այլ ներդրողներ** | - |
| **Ծրագրի իրականացման տևողությունը** | *Սկիզբը 01.07.2019թ. Տևողությունը՝ 5 ամիս* |
| **Ծրագրի ծախսերը** | *Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը առկա են:* |
| **Ամսաթիվ** | *14.05.2019թ.* |